**Արձանագրություն N 2-3**

**ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/19 ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լենուղի բնակավայրում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման մնացորդային կառուցման մնացորդային աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 01.10.2025թ.
ժամը 10:30

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Եղիազարյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ա. Աչոյան<br>Ա. Ասատրյան<br>Լ. Մելիքյան<br>Ա. Խաչատրյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Գ. Հակոբյան |

**1. Մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու մասին**

( Ա. Եղիազարյան)

Ընդունել ի գիտություն՝

1.1 Գնման ընթացակարգի մասնակցի՝ «ՊՐՈ ՇԻՆ», «ՀԷՄ» և «Վեհ Իշխանասար» ՍՊԸ-ների կոնսորցիումի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանության մասին 29.09.2025թ. ծանուցվել է վերջինիս՝ առաջարկելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը, ինչն էլ սահմանված ժամկետում արվել է վերջինիս կողմից:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:*

**2. Գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին**

( Ա. Եղիազարյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ «ՊՐՈ ՇԻՆ», «ՀԷՄ» և «Վեհ Իշխանասար» ՍՊԸ-ների կոնսորցիումի հայտը գնահատվել է բավարար:

2.2 Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «ՊՐՈ ՇԻՆ», «ՀԷՄ» և «Վեհ Իշխանասար» ՍՊԸ-ների կոնսորցիումին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:*

### 3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Եղիազարյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետով ընդունած որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «ՊՐՈ ՇԻՆ», «ՀԷՄ» և «Վեհ Իշխանասար» ՍՊԸ-ների կոնսորցիումին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:*

### 4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Ա. Եղիազարյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը (կամ չկնքվելու հանգամանքը հայտնի դառնալու օրը) ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հացեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ------------------------------ Ա. Եղիազարյան

Անդամ՝ ------------------------------ Ա. Աչոյան

------------------------------ Ա. Ասատրյան

------------------------------ Լ. Մելիքյան

------------------------------ Ա. Խաչատրյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ------------------------------ Գ. Հակոբյան